ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 314
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Ակունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Ակունք համայնքի (Ակունք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Ակունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի · Կոտայք-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի (Ակունք բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-009-0101-0258 կադաստրային ծածկագրով 6.35062 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի հողեր	07-009-0101-0258 կադաստրային ծածկագրով 6.35062 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության բնապահպանական գործառնական նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պայմանը (կցվում է):

4. Ակունք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ակունք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի (Ակունք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, « 8 » «հոկտեմբերի» 2025 թ.